



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 06/20**

13.04.2020թ.

ք. Երևան

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (նախագահությամբ՝ դատավոր Ս. Մարաբյանի, այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու խնդրանքով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 6-րդ, 61-րդ, 63-րդ և 176-րդ հոդվածների պահանջներին:

Այսպես, Դիմողի գնահատմամբ օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասում կատարել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներում ամրագրված թեզիսի (անձի իրավունքների պաշտպանության) նենգափոխում (քրեական հետապնդման մարմինների կայացրած որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման), որի արդյունքում դատական պաշտպանությունը փաստացի վերածել է դատախազական հսկողության, քանի որ ի հակադրություն ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներում ամրագրված գաղափարախոսության, դատարանի ստուգման առարկան է դարձել ոչ թե անձի իրավունքների և ազատությունների խախտված լինելը կամ չլինելը հաստատելը և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելը, այլ հետաքննության մարմնի կամ քննիչի կայացրած որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելը և որպես հետևանք՝ այն հաստատելը կամ վերացնելը: Մինչդեռ հետաքննության մարմնի, քննիչի որոշումները վերացնելը դատախազական հսկողության էությունն է:

Ի դեպ, ըստ Դիմողի՝ պետք է նաև արձանագրել, որ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը այն եզակի որոշումն է, որը դատարանը դատական վերահսկողության շրջանակներում վերացնում է, իսկ մնացած այլ որոշումների բողոքարկման դեպքում դատարանը պարզապես արձանագրում է անձի իրավունքի խախտումը և սահմանում իրավասու մարմինների կամ պաշտոնատար անձանց պարտականությունը վերացնելու այդ խախտումները: Հենց այս համատեքստում էլ առաջանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանադրականության խնդիրը, քանի որ դատարանը մինչդասական վարությամբ վերահսկողության անվան տակ փաստացի հսկողություն է իրականացնում:

Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի ՀՀ Սահմանադրությանը հակասելու հաջորդ ասպեկտին՝ դատարանի կողմից քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելուց հետո դատախազի կողմից քրեական գործ հարուցելու պարտականությանը՝ Դիմողը գտնում է, որ այնքանով, որքանով դատարանի կայացրած որոշման հիման վրա օրենքով դատախազի վրա դրվում է պարտականություն հարուցելու քրեական գործ, դրանով վիճարկվող դրույթը հակասում է Սահմանադրության 176-րդ հոդվածով սահմանված դատախազության լիազորություններին: Այլ կերպ ասած՝ վիճարկվող իրավակարգավորումը չի բխում դատախազի՝ որպես քրեական հետապնդումը և մեղադրանքը տնօրինող սուբյեկտի կարգավիճակից և լիազորություններից նաև այնքանով, որքանով դատարանի կողմից քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից քրեական գործի հարուցումը: Հետևաբար նաև այս առումով է խախտվում դատական վերահսկողության և դատախազական հսկողության հարաբերակցությունը:

Դիմողը գտնում է, որ դատախազի կողմից պարտադիր քրեական գործ հարուցելու կանոնի սահմանումը՝ անկախ այն հանգամանքից, թե դատարանն ինչ պատճառաբանությամբ է վերացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը, խնդրահարույց է նաև այն առումով, որ գործնականում դատախազը կանգնում է խնդրի առաջ: Բանն այն է, որ հաճախ գործնականում նյութերը թերի են նախապատրաստվում և որևէ պատճառաբանությամբ մերժվում է քրեական գործ հարուցելը, դատական վորահսկողության շրջանակներում հաճախ հնարավոր չի լինում միանշանակ հետևություն անել, որ քրեական գործ հարուցելու հիմքերը բավարար են, սակայն ելնելով բողոքաբերի իրավունքների և օրինական շահերի ապահովման անհրաժեշտությունից՝ դատարանները նկարագրում են այն թերությունները, այն հանգամանքները, որոնք չեն պարզաբանվել կամ այն գործողությունները, որոնք չեն կատարվել, և որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելու մասին՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նման դեպքերում չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննության, որը հնարավոր է բացառապես հարուցված քրեական գործով:

Արդյունքում ստացվում է, որ քրեական գործը հարուցվում է առանց բավարար հիմքերի կամ առնվազն կասկածների հիման վրա, որովհետև օրենսդիրն այլ լուծում չի նախատեսում, քան որոշումը վերացնելու դեպքում դատախազի կողմից քրեական գործի հարուցումն է: Օրենսդրական այլ լուծման բացակայության պայմաններում հաճախ գործնականում վեճերի առարկա է դառնում քրեական գործ հարուցելը մերժելու համար հիմք հանդիսացած հանգամանքի հետ դիմողի կամ շահագրգիռ անձի անհամաձայնության դեպքում այն փոփոխելու հարցը, մասնավորապես հետաքննության մարմինը կամ քննիչը քրեական գործ հարուցելը մերժում են, օրինակ՝ հանցակազմի բացակայության հիմքով, իսկ բողոքաբերը գտնում է, որ պետք է մերժվեր հանցադեպի բացակայությամբ կամ համաներման փոխարեն պետք է լինի վաղեմության ժամկետը լրացած լինելը և այլն:

Դիմողը գտնում է, որ նման իրավիճակների պատճառն այն է, որ դատախազի համար օրենսդիրը սահմանել է միայն մեկ որոշման կայացման հնարավորություն, եթե դատարանը վերացնում է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը: Մինչդեռ գործնականում

հաճախ է անհրաժեշտություն առաջանում ոչ թե հարուցելու նոր քրեական գործ, այլ լրացուցիչ նյութեր նախապատրաստելու կամ փոխելու որոշման հիմքը և այլն, որը հնարավոր է, եթե օրենսդրորեն հնարավոր լինի շարունակելու նյութերի նախապատրաստումը, կայացնելու նոր որոշում քրեական գործ հարուցելը մերժելու մասին՝ արդեն իսկ այլ հիմքով և այլն:

Այս դեպքում հարց է ծագում առ այն, թե երբ դատախազը հաստատել է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման օրինականությունը, իսկ դատարանը գտնում է, որ այն անօրինական է և ենթակա է վերացման, ապա պե՞տք է իր որոշման մեջ նշի, թե հատկապես քրեական օրենսգրքի որ հոդվածով, հոդվածի մասով կամ կետով պետք է հարուցել քրեական գործը, թե՞ ոչ: Մասնավորապես, եթե դատախազը գտներ, որ առկա են որևէ հանցակազմի հատկանիշներ, ապա այդ հոդվածի հատկանիշներով կհարուցեր քրեական գործը, իսկ եթե չի հարուցել, ապա չի տեսել որևէ հանցակազմի հատկանիշ: Այստեղից հետևում է, որ եթե դատարանը վերացնում է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը, ապա պետք է նաև նշի այն հոդվածը, որի հատկանիշներով դատախազը պարտավոր է հարուցել քրեական գործ, հակառակ դեպքում դատարանի որոշման կատարումը կարող է դժվարություններ առաջացնել: Այստեղից էլ այն խնդիրը, թե որքանով է դատական վերահսկողության առարկայի մեջ մտնում քրեական հետապնդման մարմիններին ուղղորդել հարուցել քրեական գործը և քննությունն իրականացնել կոնկրետ հանցակազմի հատկանիշների շրջանակներում, արդյոք այս դեպքում դատարանը չի իրականացնի փաստացի քրեական հետապնդման գործառույթ, այլ ոչ թե դատական իշխանության կամ արդարադատության գործառույթ:

Այսպիսով, Դիմողը գտնում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության ինստիտուտի սահմանադրաիրավական հայեցակարգը պատշաճ իրականացված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, այսինքն՝ առանց բավարար պատճառաբանության տարբերակված մոտեցում է ցուցաբերված հետագա դատական վերահսկողության տարբեր կառուցակարգեր սահմանելիս, ընդ որում, նույնասեռ որոշումների դեմ ներկայացվող բողոքների քննության դատավարական կարգի, ժամկետների, դատարանի լիազորությունների և դատարանի կողմից կայացված որոշման տեսակի ու դրա իրավական հետևանքների առումով: Առավել խնդրահարույց է այն հանգամանքը, որ թեև օրենսդիրը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանել է առանձին կառուցակարգ քրեական գործ հարուցելը մերժելու որոշման դատական բողոքարկման և դատարանի քննարկման և լուծման առումով, սակայն մի շարք հարցեր չի կանոնակարգել այդ նորմում, օրինակ այն, թե բողոքը որ դատարանին պետք է ներկայացվի, ինչքան ժամկետում պետք է քննվի, ովքեր իրավունք ունեն մասնակցելու բողոքի քննությանը և այլ հարցեր, որոնք ամրագրված են նույն օրենսգրքի 290-րդ հոդվածում և անալոգիայի կարգով կիրառվում են նաև քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումների դեմ բերված բողոքների քննարկման և լուծման դեպքում:

Ելնելով վերոգրյալից՝ Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

Վիճարկվող քրեադատավարական դրույթի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի բովանդակությունը հետևյալն է.

5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

2. Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:

3. Օրենքները և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2. Դատական վարույթը կամ դրա մի մասը, օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով:

3. Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է:

ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի համաձայն՝

1. Դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը:

2. Դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝

1) հարուցում է քրեական հետապնդում:

2) հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ:

3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը.

4) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները.

5) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

3. Դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

4. Դատախազությունը գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա:

5. Դատախազության կազմավորման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

Հարկ է նկատել, որ վիճարկվող քրեադատավարական դրույթի սահմանադրականության խնդիրը հատկապես կապված է մինչդատական վարույթի նկատմամբ դատական հետագա վերահսկողության և դատախազական հսկողության ինստիտուտների էության, դրանց կապի և հարաբերակցության խնդրի հետ, որի առնչությամբ առկա են ՀՀ վճռաբեկ դատարանի և Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներ:

Դատախազական հսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ

Մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության ինստիտուտը ՀՀ Սահմանադրությամբ սահմանված՝ դատախազի սահմանադրական կարգավիճակի բովանդակության մասն է, որի հիմքում ընկած է ՀՀ սահմանադրության 176-րդ 2-րդ մասի 2-րդ կետի դրույթը, համաձայն որի՝ դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ հսկողություն է իրականացնում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության էությանն ու սահմանադրական հիմքերին անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանն իր 17.11.2015թ. թիվ ՄԴՈ-1236 որոշման մեջ:

Համաձայն նշված որոշման՝ «... սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ակնհայտ է գործող օրենսդրությամբ, մի կողմից, հետաքննության, նախաքննության մարմինների, մյուս կողմից՝ դատախազության գործառույթային լիազորությունների տարանջատումը՝ սույն գործով վեճի առարկա և դրա հետ կապված իրավակարգավորումներում: Ընդ որում, եթե հետաքննության, նախաքննության իրականացումը պետական իրավասու մարմինների՝ **օրենքով նախատեսված** բացառիկ լիազորությունն է, ապա այդ գործունեության նկատմամբ հսկողության (դատավարական հսկողության) իրականացումը դատախազության **սահմանադրական գործառույթն ու պարտականությունն է**: Վերջինիս դեպքում օրենսդիրը նկատի է ունեցել, որ հետաքննության և նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության գործառույթը **ոչ թե գերատեսչական հսկողության բովանդակություն ունի**, այլ կոչված է օրենքով նախատեսված միջոցներով ապահովելու քրեական գործերով վարույթի օրինականությունը՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված լիազորությունների շրջանակներում: Նկատի է առնվում

նան, որ քրեական գործով դատաքննության փուլում պետական մեղադրանքի պաշտպանության սահմանադրական գործառույթի իրականացման բացառիկ իրավունքը նույնպես վերապահված է դատախազին, ով **պատասխանատու է հետաքննության և նախաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության համար**, ինչն էլ իրավական կարևոր նախադրյալ է այդ մեղադրանքը դատարանում արդյունավետ պաշտպանելու և քրեական գործով արդար դատաքննություն իրականացնելու համար»:

Սահմանադրական դատարանն իր 4 փետրվարի 2011 թ. թիվ ՍԴՈ-935 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում, համաձայն որի՝ «քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում կայացված՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումների վերանայումը դատախազի կողմից՝ հանդիսանում է հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության առանձին տարատեսակ,...»:

2009 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՍԴՈ-844 որոշման մեջ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «ՀՀ Սահմանադրության 103 հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ: Քրեական գործերով մինչդատական վարույթում դատախազի լիազորությունները սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53 հոդվածում, ինչպես նաև «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածում, որոնցում պարունակվող դրույթների վերլուծությունը վկայում է, որ, ի ապահովումն սահմանադրական վերոհիշյալ պարտականության կատարման, մինչդատական վարույթում հսկողություն իրականացնելիս դատախազը պատասխանատու է հետաքննության և նախաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության համար («Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածի 3-րդ մաս), օժտված է այնպիսի լիազորություններով, որոնք կոչված են ղեկավարելու (ուղղորդելու) հետաքննության մարմնի, քննիչի դատավարական գործունեությունը, ինչպես նաև լուծելու վերջիններիս որոշումների և գործողությունների դեմ բերված բողոքները, «բացառությամբ այն բողոքների, որոնց լուծումն օրենքով վերապահված է դատարանին» (օրենսգրքի 53 հոդվածի 9-րդ կետ): Վերոթվարկյալ գործառույթները դատախազն իրականացնում է հիշյալ հոդվածում նախատեսված իր լիազորությունների շրջանակներում՝ բողոքում հիմնավորված օրինախախտումները վերացնելու նպատակով ղեկավար ցուցումներ և այլ հանձնարարություններ տալով հետաքննության մարմնին, քննիչին կամ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին՝ անհրաժեշտության դեպքում վերացնելով նաև վերջիններիս որոշումները»:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր 28.07.2015թ. թիվ ՍԴՈ-1225 որոշման մեջ, անդրադառնալով դատախազի՝ հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորությանը, նշել է որ ... դատախազը հանդես գալով որպես հսկողություն իրականացնող սուբյեկտ, կարող է ստուգել քննիչի որոշման պատճառաբանվածությունը և հաշվի առնելով քրեական գործերով նախաքննության օրինականության, լրիվության, բազմակողմանիության և

արդյունավետության սկզբունքները՝ հաստատել կամ չհաստատել քննիչի համապատասխան դատավարական ակտը:

Այսպիսով, վերը նշված սահմանադրական նորմերից և սահմանադրական դատարանի որոշումներից հետևում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողությունը հետաքննության և նախաքննության լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության ապահովմանն ուղղված գործունեություն է, որն, ի թիվս այլնի, իր մեջ ներառում է դատախազի կողմից հետաքննության մարմնին, քննիչին կամ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին ղեկավար ցուցումներ և այլ հանձնարարություններ տալը, գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին և այլ որոշումների վերանայումը, այդ թվում՝ դրանց վերացումը դատախազի կողմից:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության սահմանմամբ օրենսդիրը նպատակ է հետապնդել ապահովել անձի իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու պետության պոզիտիվ պարտականության կատարումը (ՀՀ սահմանադրություն, հոդված 75):

Հետագա դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի համաձայն՝

1. Դատարանը քննում է քննչական, օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու և անձի հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունները:

2. Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները:

3. Դատարանի՝ սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերում ընդունվող որոշումները կարող են վերանայվել վերադաս դատարանի կողմից՝ դատախազի, միջնորդություն հարուցած մարմնի, այն անձանց կամ նրանց ներկայացուցիչների բողոքի հիման վրա, որոնց շահերը շոշափվում են:

Պետք է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ գլուխը, որը վերտառված է «Դատական վերահսկությունը մինչդատական վարույթի նկատմամբ», կարգավորում է քրեական հետապնդման մարմինների գործողությունների և որոշումների դատական վերանայման հետ կապված իրավահարաբերությունները:

Մասնավորապես, այդ գլխում ներառված 290-րդ հոդվածի համաձայն՝

1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց

իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

...

5. Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: Դատավորի որոշման պատճենն ուղարկվում է դիմողին և վարույթն իրականացնող մարմնին:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմանադրական հիմքերին անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում: Մասնավորապես, 2009 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՍԴՈ-844 որոշման մեջ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է.

«Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1-ին մասում նախատեսված դատական բողոքարկման կարգին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հետաքննության, նախաքննության մարմինների, պաշտոնատար անձանց, դատախազի որոշումները և գործողությունները դատարան բողոքարկելու՝ անձանց (քրեական դատավարության մասնակիցների և այլ անձանց) իրավունքը կարող է իրացվել հետևյալ նախապայմանների դեպքում.

- եթե խախտվել են այդ անձանց իրավունքները և օրինական շահերը,
- եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

Վերջինիս դեպքում հետևում է, որ անձը դատախազի որոշումը կամ գործողությունը բողոքարկելիս պետք է դիմի նաև վերադաս դատախազին: Իսկ իրավունքների և օրինական շահերի խախտման վերաբերյալ նախապայմանի առաջադրումը վիճարկվող նորմի իրավակարգավորման շրջանակներում խոչընդոտ չի կարող հանդիսանալ անձի բողոքն ըստ էության քննելու համար:

Այսպիսով, ինչպես վկայում է վիճարկվող նորմի իրավական բովանդակությունը, անձն իր իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության՝ ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածներով նախատեսված իրավունքն իրացնելիս նախ պարտավոր է դատախազի առջև հայցել իր բողոքի բավարարում, այսինքն՝ արդարադատության մատչելիության իր իրավունքն իրականացնել իրավական պաշտպանության մեկ այլ միջոցի նախապես գործադրման պայմանով»:

Կամ, համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի 2015թ. հոկտեմբերի 20-ի թիվ ՍԴՈ 1234 որոշման՝ «ՀՀ սահմանադրական դատարանը, մասնավորապես, կարևոր է համարում արձանագրել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ գլուխը նվիրված է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությանը, որը սահմանում է դատավարական երաշխիքներ անձի ազատության և անձեռնմխելիության, բնակարանի անձեռնմխելիության, ինչպես նաև խախտված իրավունքների դատական պաշտպանության համար: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակը սահմանափակ է, այսինքն՝ դատական պաշտպանության երաշխիքները տարածվում են

անձի իրավունքների պաշտպանության վրա: Դրանից ելնելով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածում թվարկված են մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտները: Այսինքն՝ դատարանը քննում է քննչական, օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու և անձի սահմանադրական իրավունքները և ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունները, ինչպես նաև նշված մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները:»:

Այսպիսով, գործող իրավակարգավորումների և իրավակախրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը կոչված է քրեական գործերի քննության մինչդատական փուլում երաշխավորելու անձի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով սահմանված դատական պաշտպանության և արդարադատության մատչելիության սահմանադրական իրավունքի իրագործումը: Դատական պաշտպանության այս միջոցը խնդիր ունի կանխել կամ վերացնել դատավարության մասնակիցների իրավունքների և ազատությունների խախտումները, վերականգնել խախտված իրավունքները, ինչպես նաև չեզոքացնել քրեական հետապնդման մարմինների ոչ իրավաչափ գործունեության անբարենպաստ կամ վնասակար հետևանքները:

Անձի իրավունքների դատական պաշտպանության այս ձևի խնդիրն է որոշակի ստուգողական գործունեության միջոցով պարզել և գնահատել քրեական հետապնդման մարմինների գործողությունների (անգործության) և որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը: Այն լուրջ զսպիչ գործոն է պետաիշխանական լիազորություններ ունեցող մարմինների և պաշտոնատար անձանց համար, ինչպես նաև էական երաշխիք առ այն, որ անձի խախտված իրավունքները կարող են վերականգնվել առավել արագ և արդյունավետ: Դրա հետ մեկտեղ այս ընթացակարգում մրցակցության տարրերի առկայությունը երաշխավորում է համապատասխան գործողությունների և որոշումների դեմ բերված բողոքների արդարացի քննությունն ու լուծումը¹:

Մինչդատական վարույթում դատական վերահսկողության ինստիտուտի առարկան են կազմում անձի և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, ինչպես նաև հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունվող որոշումների ու կատարվող գործողությունների (անգործության) օրինականությունը՝ դատական կարգով արդյունավետորեն պաշտպանելու և վերականգնելու մարդու խախտված իրավունքներն ու ազատությունները:

Ինչ վերաբերում է դատական պաշտպանության իրավունքի բովանդակությանը, ապա անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից դատական պաշտպանության իրավունքը սահմանող սահմանադրական նորմերի նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը

¹ Տե՛ս Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իրավական, տեսական և գործնական հիմքերը, ժամանակակից զարգացումներն ու կատարելագործման ուղիները, խմբ. Դ. Ավետիսյան, Երևան, Աստղիկ, 2015:

սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է²:

Այսպիսով, մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության բովանդակությունը քրեական հետապնդման և օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների գործողությունների և որոշումների դատական վերանայումն է՝ ապահովելու համար աճի իրավունքների և ազատությունների խախտման փաստի բացահայտումը և խախտված իրավունքների վերականգնումը:

Դատախազական հսկողության և դատական վերահսկողության հարաբերակցությունը

Անդրադառնալով մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության և դատական վերահսկողության հարաբերակցության հարցին՝ ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2009 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՍԴՈ-844 որոշման մեջ նշել է.

«... ՀՀ Սահմանադրության 5, 91 և 103 հոդվածների նորմերին համապատասխան ՀՀ-ում դատական իշխանությունն ու դատախազությունը սահմանադրաիրավական ինստիտուցիոնալ անկախ համակարգեր են՝ բաժանված պետական իշխանության այլ (օրենսդիր, գործադիր) մարմիններից, և գործում են Սահմանադրությամբ ու օրենքներով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում: ...»

Այսպիսով, քրեական գործերով մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության և դատական վերահսկողության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող, այդ թվում՝ սույն գործով վիճարկվող, իրավանորմերի համալիր վերլուծությունը միանշանակ վկայում է այդ գործառույթների ընդհանուր նպատակի (որպես իրավապահ գործունեություն), սակայն տարբեր առանձնահատկությունների մասին, հետևաբար, պատասխանող կողմի փաստարկն այն մասին, թե «...և դատախազական հսկողությունը, և դատական հսկողությունը միմյանց լրացնող ինստիտուտներ են», չի բխում սույն գործով վեճի առարկայից և այդ գործառույթների սահմանադրաիրավական բովանդակությունից: Սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական գործերով մինչդատական վարույթի շրջանակներում քրեական վարույթ իրականացնող մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների, գործողությունների ու անգործության դատական բողոքարկման ինստիտուտի կիրառման պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ այդ բնագավառը կարգավորող նորմերի դրույթները պետք է ընկալվեն նաև որպես համակարգային ամբողջություն, որը պայմանավորված է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմանադրաիրավական բովանդակությամբ և երաշխիք է ՀՀ Սահմանադրության 18 հոդվածով նախատեսված անձանց իրավունքների արդյունավետ իրացումն ապահովելու համար:»:

Հարկ է նշել նաև, որ դատական վերահսկողության և դատախազական հսկողության հարաբերակցության խնդիրը քննարկման առարկա է դարձել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի

² ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. հունվարի 16, ՍԴՈ-673, 8-րդ կետ:

իրավակիրառ պրակտիկայում: Այսպես, 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԴ/0081/11/09 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը. «Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը մինչդատական վարույթում անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից մեկն է և դատախազական հսկողության հետ համատեղ կոչված է ապահովելու նախաքննության մարմնի գործողությունների ու որոշումների օրինականությունը և հիմնավորվածությունը: Մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատական վերահսկողությունը, սակայն, դատախազական հսկողության համեմատ ունի իր խնդիրներով պայմանավորված առանձնահատկություններ, որոնք իրենց հերթին պայմանավորում են վերահսկողության օբյեկտի (առարկայի), վերահսկողության իրականացման ընթացակարգի (դատավարական ձևի), ընդունվող որոշումների և դրանց իրավական նշանակության տարբերությունները:

Մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող դատախազական հսկողության և դատարանի վերահսկողության շրջանակներում քննվող բողոքների արդյունքում խախտված իրավունքների վերականգնման ձևերն ու եղանակները տարբեր են: Համապատասխան բողոքի քննության արդյունքում դատարանն անձի խախտված իրավունքը և ազատությունը վերականգնում է ոչ թե մինչդատական վարույթն իրականացնող մարմնին դատավարական որոշակի գործողություններ կատարելու ցուցում տալով կամ նրանց որոշումները վերացնելով, ինչպես առկա է դատախազական հսկողության պարագայում, այլ թույլ տրված օրինախախտումը վերացնելու և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու վերաբերյալ իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը սահմանելով (...):»:

Վերոգրյալի լույսի ներքո՝ գտնում ենք, որ դատական վերահսկողության իրավական կարգավորումը և բուն իրականացումը չպետք է հանգեցնեն արդարադատության և քրեական հետապնդման գործառույթների միախառնման: Սահմանադրական վերը նշված նորմերի պահանջով անհրաժեշտ է հստակ տարանջատել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանի գործառույթները դատախազին վերապահված գործառույթներից:

Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի քննության արդյունքում դատարանը պետք է գնահատի քրեական հետապնդման մարմինների գործողությունների (անգործության) և որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը, արձանագրի, թե անձի իրավունքների և ազատությունների խախտումներ թույլ տրվել են, թե ոչ: Իսկ նշված որոշման հիման վրա արդեն դատախազը պետք է որոշի, թե ինչ անհրաժեշտ և բավարար միջոցներ պետք է ձեռնարկվեն արձանագրված խախտումները վերացնելու համար:

Վերը նշված վերլուծությունները համադրելով սույն գործով վիճարկվող դրույթի և դրա հետ փոխկապակցված իրավակարգավորումներին հետ՝ հանգում ենք հետևյալին.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝

1. Քրեական գործ հարուցելու առիթն անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման պատճենը 24 ժամվա ընթացքում ուղարկվում է համապատասխան դատախազին:

2. Որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին:

3. Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով որոշման պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում:

4. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա վերադաս դատախազը այն ստանալու պահից 7 օրվա ընթացքում վերացնում է բողոքարկվող որոշումը, հարուցում է քրեական գործ և նախաքննություն կատարելու համար այն ուղարկում է քննիչին կամ հաստատում է քրեական գործ հարուցելը մերժելու օրինականությունը:

5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը:

Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ որոշումը կարող է բողոքարկվել **նույն օրենսգրքով սահմանված կարգով**: Նույն հոդվածից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է այդ որոշման բողոքարկման երկու առանձին ընթացակարգեր՝ դատախազին՝ դատախազական հսկողության կարգով (ՀՀ քր. դատ. օր. հոդվ. 185, մաս 4) և դատարան՝ դատական վերահսկողության կարգով (ՀՀ քր. դատ. օր. հոդվ. 185, մաս 5):

Համաձայն ՀՀ վճռաբեկ դատարանի 2011թ. հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0004/11/11 նախադեպային որոշման մեջ շարադրված դիրքորոշումների՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածն ինքնին սահմանել է քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ որոշման բողոքարկման հատուկ կարգ, ինչը նշանակում է, որ կիրառման է ենթակա բողոքարկման այդ հատուկ կարգը, և հակառակը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի **39-րդ գլխով** սահմանված ընդհանուր կարգը, այդ թվում նաև՝ օրենսգրքի 290-րդ հոդվածը, հետագա դատական վերահսկողության կարգով քննարկվող որոշումը բողոքարկելու համար, կիրառման ենթակա չէ:

Վիճարկվող դրույթում օրենսդիրը սահմանել է քննարկվող որոշման բողոքարկման արդյունքում դատարանի կողմից կայացվող հնարավոր որոշումների շրջանակը և դրանց իրավական հետևանքները:

Այսպես, քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը կայացնում է որոշում՝

ա) բողոքարկվող՝ քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ որոշումը *վերացնելու մասին*,

բ) բողոքարկվող՝ քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ որոշումը *հաստատելու մասին*:

Այն դեպքում, եթե դատարանի կողմից որոշում է կայացվում բողոքարկվող՝ քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ որոշումը վերացնելու մասին, այդ դեպքում դատախազի կողմից քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելը դառնում է պարտադիր:

Այսպիսով, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դատական բողոքարկման պարագայում դատարանը կայացնում է ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված որոշումներից մեկը (մասնավորապես՝ ա)բողոքը հիմնավորված ճանաչելու, անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին, բ) բողոքը մերժելու մասին), այլ բողոքարկվող որոշումը վերացնելու կամ հաստատելու մասին (ՀՀ քր. դատ. օր. հոդվ. 185, մաս 5):

Ելնելով սահմանադրական դատարանի՝ վերնում մեջբերված որոշումներում արտահայտված դիրքորոշումներից և քրեադատավարական գործող կարգավորումներից, գտնում ենք, որ բողոքարկվող՝ քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ որոշումը վերացնելու կամ հաստատելու մասին որոշում կայացնելու դատարանի իրավասության սահմանումը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության քրեադատավարական ինստիտուտի բովանդակությունից և տրամաբանությունից դուրս է:

Բանն այն է, որ, ինչպես արդեն նշել ենք, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը որպես անձի դատական պաշտպանության իրավունքի բաղադրատարր, ենթադրում է դատավարական ընթացակարգ, որն ուղղված է դատարանի կողմից անձի իրավունքների և ազատությունների խախտումների վերհանմանը և խախտված իրավունքների վերականգնմանը: Մինչդեռ քրեական հետապնդման մարմինների որոշումների վերացումը կամ դրանց օրինականության հաստատումը բնորոշ է մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության ինստիտուտին: Ստացվում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատարանի համար քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ որոշումը վերացնելու կամ հաստատելու լիազորություն սահմանելով՝ վերջինիս հաղորդվում է դատախազական հսկողությանը բնորոշ լիազորություն, ուստի՝ դատախազի կարգավիճակ: Նման իրավակարգավորումը հակասում է դատարանի սահմանադրական կարգավիճակին՝ միայն դատարանի կողմից արդարադատություն իրականացնելու սահմանադրական սկզբունքին, անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքին, քրեական հետապնդման և գործի լուծման ֆունկցիաների միախառնման արգելքին:

Նույն համատեքստում հարկ է անդրադառնալ նաև քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման հիմքերին և և դատական վերանայման առարկային:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի համաձայն՝ *Քրեական գործ հարուցելու՝ սույն օրենսգրքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, իրենց իրավասության շրջանակներում, պարտավոր են քրեական գործ հարուցել:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելու մասին:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

*1. Քրեական գործ հարուցելու առիթն **անօրինական լինելու կամ հիմքերի բացակայության** դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելը մերժելու մասին:*

Այսպիսով՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դատական բողոքարկման հիմքը քրեական գործ հարուցելու առիթի օրինական լինելն է կամ հիմքերի առկայությունը: Այսինքն՝ բողոքաբերը դատարանին ուղղված բողոքում պետք է հիմնավորի, որ չնայած գործով առկա են եղել քրեական գործ հարուցելու օրինական առիթ և բավարար հիմքեր, այնուամենայնիվ՝ դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը որոշում են կայացրել քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Նույն կերպ՝ դատարանն էլ նշված բողոքի հիման պետք է ստուգի քրեական գործ հարուցելը մերժելու օրինականությունը և հիմնավորվածությունը, այսինքն՝ արդյոք տվյալ գործով առկա է օրինական առիթ քրեական գործ հարուցելու համար և կան արդյոք բավարար հիմքեր քրեական գործ հարուցելու համար՝ արդյունքում կայացնելով քննարկվող որոշումը հաստատելու կամ այն վերացնելու մասին որոշում: Մտացվում է, որ անձի իրավունքների և ազատությունների խախտման և խախտված իրավունքների վերականգնման հանգամանքը քննարկվող բողոքի դատական վերանայման առարկան չեն կազմում, և դատարանն ըստ էության իրականացնում է դատախազական հսկողությանը բնորոշ գործառույթ՝ շեղվելով դատական պաշտպանություն իրականացնելու իր առաքելությունից՝ վերացնելով կամ հաստատելով քրեական հետապնդման մարմնի որոշումը, ինչը դատախազական հսկողությանը բնութագրական գործառույթ է:

Ավելին, առավել քան խնդրահարույց է քրեադատավարական կարգավորումն առ այն, որի համաձայն՝ եթե դատարանի կողմից որոշում է կայացվում բողոքարկվող՝ քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ որոշումը վերացնելու մասին, այդ դեպքում դատախազի կողմից քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելը դառնում է պարտադիր:

Լիովին համակարծիք լինելով Բիմողի դիրքորոշման հետ՝ գտնում ենք, որ դատարանի կողմից քննարկվող որոշումը վերացնելու արդյունքում դատախազի վրա օրենքի ուժով քրեական գործ հարուցելու պարտականություն դնելը դատարանին միջնորդավորված կերպով վերաժում է քրեական հետապնդման մարմնի: Այսինքն՝ դատարանը, չունենալով անմիջականորեն քրեական գործ հարուցելու լիազորություն, վիճարկվող իրավակարգավորման շրջանակներում միջնորդավորված կերպով՝ դատախազի միջոցով, վիճարկվող օրենքի ուժով հարուցում է քրեական գործ: Նման իրավակարգավորումը, ի թիվս այլնի, հակասում է սահմանադրությամբ սահմանված անմեղության կանխավարկածի սկզբունքին: Նման կարգով քրեական գործ հարուցել պարտադրելու դեպքում ըստ էության շրջանցվում է անմեղության կանխավարկածի բաղադարատարը հանդիսացող՝ չփարատված կասկածները հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու սահմանադրական

պահանջը: Դատախազին քրեական գործ հարուցելու պարտադրանքը և դատարանի սահմանադրական կարգավիճակը անհամատեղելի են միմյանց հետ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը խնդրահարույց է:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան